ԱՐՅՈՒՆԱՎՈՐՈՒՄ

ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ



ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆԻ ՔԱՐՈԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

Ֆրանսիա և Ավստրալիա կատարած իր հովվապետական այցելություններից վերադառնալուց անմիջապես հետո, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանի այլազան թեմերում ձեռնարկել է Մեծի Պահոց շրջանի քարոզների շարք:

Վեհափառ Հայրապետը ուրբաթ օրը, մարտի 7-ին, երեկոյան հսկումի ժամերգությունից հետո, իր անդրանիկ քարոզը տվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, որտեղ բարիգալստյան խոսքով Վեհափառ Հայրապետին ողջունեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը:

Շաբաթ օրը, մարտի 8-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում հերթական հոգևոր համերգից հետո, Նորին Սրբությունն իր խոսքն ուղղեց հազարավոր ունկնդիրներին՝ նրանց հորդորելով Մեծ Պահքի շրջանում մաքրվել հոգով ու գործով:

Երեքշաբթի օրը, մարտի 11-ին, Նորին Սրբությունը հավատացյալ ժողովրդին կքարոզի Աշտարակի Ս. Մարինե եկեղեցում և ապա իր պատգամը կտա քաղաքի Մշակույթի տանը:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը կքարոզի նաև Շիրակի, Կոտայքի և Գեղարքունյաց թեմերում:

Ուրբաթ օրը, մարտի 14-ին, Նորին Սրբությունը կայցելի Մալաթիայի Հայորդյաց տներ և խոսք կուղղի այնտեղ ուսանող սաներին և ծնողներին:

Իր քարոզների շարքով Վեհափառ Հայրապետը հոգևոր վերարթնության է հրավիրում մեր ժողովրդի զավակներին՝ ի պատրաստություն Քրիստոսի Հարության մեծ տոնին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՅՑԸ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ՝ ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՄԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՑԻ

Սույն թվականի մարտի 11-ին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Արագածոտնի թեմի Առաջնորդ Նավասարդ վրդ. Կճոյանի, Արտակ աբղ. Տիգրանյանի, Բագրատ աբղ. Գալստյանի, Հայրապետական առաջին այցելությունը տվեց Արագածոտնի թեմի Աշտարակի Ս. Մարինե եկեղեցու հավատացյալ զավակներին: Վեհափառ Հայրապետն արդեն իսկ ավանդություն է դարձրել Մեծի Պահոց քառասնօրյա շրջանին այցելել Հայաստանի տարբեր թեմերի եկեղեցիներ՝ իր ժողովրդի զավակներին մխիթարելու և հայրենի ավանդությունները վերակենդանացնելու քարոզության նպատակով:

Աշտարակի Ս. Մարինե եկեղեցու բակում հավատացյալների խուռներամ բազմությունը, մարզպետ Հրաչիկ Գրիգորյանի, քաղաքապետ Կարեն Գևորգյանի և թեմի հոգևորականների ու պետական-քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների գլխավորությամբ, ջերմորեն դիմավորեց Հայոց Հայրապետին:

Ապա, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Ս. Մարինե եկեղեցում կատարված ժամերգությունից հետո, Նորին Սրբությունը պատգամեց ժողովրդին ապրել և գործել իրենց հայրերի նախանշած ուղիով՝ հայ քրիստոնյայի իսկատիպ դիմագծով:

Հավարտ սրբազան արարողության ժողովրդական խանդավառ ուղեկցությամբ Նորին Սրբությունն առաջնորդվեց Աշտարակի մշակույթի պալատ, որտեղ իր